



ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՎՈՂ ՈՒՍՈՒՑՉԻ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Նախագծային ուսուցման դերը սովորողների նախաձեռնողականության և սովորելու կարողունակության զարգացման գործում

Հետազոտող ուսուցիչ՝

Անահիտ Սարգսյան
անուն, ազգանուն

Զորավար Անդրանիկ Օզանյանի թիվ 5 հիմնական դպրոց
դպրոց

Մենթոր ուսուցիչ

Ա. Անտոնյան
անուն, ազգանուն

Բովանդակություն

Ներածություն.....	2
Հետազոտության համատեքստ.....	3
Հետազոտության հիմնական բնութագիրը.....	4
Հետազոտության ընթացքը և տվյալների հավաքագրում	10
Տվյալների վերլուծություն և մշակում.....	13
Եզրակացություններ	14
Օգտագործված գրականության ցանկ.....	15

Ներածություն

Թեմայի արդիականությունը

Նախագծային մեթոդը մանկավարժությանը մեջ այդքան էլ նոր չէ. համարվում է, որ այն սկիզբ է առել անցյալ դարի քսանական թվականներին ԱՄՆ-ում: Անվանվում էր նաև պրոբլեմների ուսումնասիրման մեթոդ, որը կապվում էր, նախ և առաջ, մարդասիրական խնդիրների ուսումնասիրման հետ: Այս մեթոդը մշակել են ամերիկացի փիլիսոփա, մանկավարժ Ջոն Դյուլին և նրա աշակերտ Վ. Խ. Կիլպատրիկը:

Դյուլին առաջարկում էր ուսուցման հիմքում դնել սովորողի ակտիվությունը՝ հիմնվելով սովորողի նպատակային գործունեության և անհատական հետաքրքրությունների վրա: Կարևոր է սովորողներին ցույց տալ իրենց անձնական շահագրգռվածությունը գիտելիք ստանալու գործընթացում. գիտելիք, որը կարող է և պետք է կիրառվի կյանքում: Ուսուցիչը կարող է հուշել տեղեկատվության նոր աղբյուրներ կամ պարզապես անհրաժեշտ ուղղությամբ տանել աշակերտի միտքը: Արդյունքում սովորողները պետք է ինքնուրույն, համատեղ ջանքերով հաղթահարեն դժվարությունը՝ օգտագործելով տարբեր առարկաներից համապատասխան գիտելիքը, հմտությունը՝ անհրաժեշտ արդյունք ստանալու համար:

Դյուլին գրում է. «Երեխան կրկնում է մարդկության ճանաչողության ուղին, գիտելիքի յուրացումը սպոնտան, անկառավարելի գործընթաց է. երեխան յուրացնում է նյութը ոչ թե լսելով կամ ընկալելով զգայական համակարգով, այլ երբ զգում է այդ գիտելիքի կարիքը և յուրացման գործընթացի ակտիվ մասնակից է»:

Չեռագոտության նպատակները

- Ստեղծել այնպիսի պայմաններ, որ աշակերտը կարողանա ակտիվացնել իր ստեղծագործական ունակությունները, դառնա ավելի ինքնուրույն, կախված չլինելով ընկերներից, մեծահասակներից՝ դպրոցական ծրագրերին համապատասխան մեթոդների շնորհիվ:

Չեռագոտության խնդիրները

- Որոնողական և ստեղծագործական մտածելակերպով ակտիվացնել աշակերտների իմացական հետաքրքրությունը
- ձևավորել այնպիսի կարողություններ, ինչպիսիք են օրինակ՝ տեղեկատվական դաշտում արագ և հեշտ կողմնորոշվելը
- զարգացնել հետևյալն ունակությունները՝ քննադատական և վերլուծական
- սկզբում փորձել նշված ունակությունները զարգացնել մեծահասակների օգնությամբ, այնուհետև նաև սովորել ինքնուրույն գործել և մտածել:

- սերմանել ցուցաբերել հարգանք մեծերի, ծնողների և ընկերների նկատմամբ:

Չետագոտության օբյեկտը

Դպրոցականների նախագծային կարողությունների զարգացումն է:

Չետագոտության առարկան

Դպրոցականների նախագծային կարողությունների զարգացումը խաղի միջոցով:

Չետագոտության մեթոդները

- Ուսումնասիրվող հիմնահարցի շուրջ գոյություն ունեցող գիտամեթոդական գրականության վերլուծություն
- Չրույցի հարցման մեթոդ
- Խաղի մեթոդ

Չետագոտության համատեքստ:

Չետագոտական խնդիրների իրականացման համար ընտրվել են դրանց համարժեք մեթոդական գործիքակազմ: Այսպիսով հետագոտության ընթացքում կիրառվել են հետևյալ մեթոդները՝

1. «Մեր սեղանի սուրբ հացը»

2. «Մեր այգում ամառ է» նախագծային խաղերը:

Չետագոտությունն իրականացվել է 2022 թվականի ամռանը, Արմավիրի, Չորավար Անդրանիկ Օգանյանի թիվ 5 հիմն. դպրոցի, 2ա դասարանի 34 աշակերտների հետ՝ էքսկուրսիաների ընթացքում, խմբային և ոչ խմբային տարբերակով: 1-ին հետագոտությունը՝ «Մեր սեղանի սուրբ հացը», անց է կացվել էքսկուրսիայի ժամանակ, Մաչանենց տանը, իսկ 2-րդ՝ «Մեր այգում ամառ է» նախագիծը, ամառանոցային միջավայրում: Երեխաները նախագծի ընթացքում իրենց դրսևորում էին շատ ակտիվ, քանի որ, թեմաներն այնպես էին ընտրված, որ հետաքրքրություն և ոգևորություն էին առաջացրել նրանց մոտ:

Նախագծային ուսուցման դերը սովորողների նախաձեռնողականության և սովորելու կարողունակության զարգացման գործում

Վատ ուսուցիչը դասավանդում է փաստեր, իսկ լավը՝ սովորեցնում է փնտրել և գտնել:
Ա. Դիստերվեզ

Նախագծային մեթոդի հիմնական նպատակն է սովորողներին տալ հնարավորություն գործնական խնդիրների կամ առաջադրանքների լուծման գործընթացում ինքնուրույն ձեռք բերել գիտելիքներ՝ տարբեր առարկաներից գիտելիքների ինտեգրման միջոցով:

Նախագծային մեթոդը հետազոտական, պրոբլեմային, ստեղծագործական մեթոդների համադրություն է: Այստեղ ուսուցիչը ստանձնում է մշակողի, համակարգողի, փորձագետի, խորհրդատուի դեր: Սա նշանակում է, որ նախագծային մեթոդի հիմքում ընկած է սովորողի ճանաչողական հմտությունների, սեփական գիտելիքներն ինքնուրույն ձևակերպելու, տեղեկատվական տարածքում կողմնորոշվելու, քննադատական և ստեղծագործական մտածողության ձևավորումն ու զարգացումը:

Մեթոդը ներդրվել է 18-րդ դարում Եվրոպայում՝ ճարտարապետության և ճարտարագիտության դպրոցներում, երբ ավարտելուց հետո ուսանողները պետք է կիրառեին իրենց ուսման ընթացքում սովորած հմտություններն ու գիտելիքները, օրինակ, լուծեին հուշարձանի նախագծման խնդիրներ:

Դեռևս 20-րդ դարի առաջին կեսին Ջոն Դյուլիի կողմից պրագմատիկ մանկավարժության հիման վրա մշակված նախագծերի մեթոդը հատկապես կարևորվում է ժամանակակից տեղեկատվական հասարակությունում:

Նախագծային մեթոդը մանկավարժության մեջ նորույթ չէ: Այն կիրառվել է ավելի վաղ, քան ամերիկացի ուսուցիչ Ուիլյամ Յերոյ Կիլպատրիկի «Ծրագրի մեթոդ» (1918) հայտնի հոդվածի հրապարակումը, որտեղ նա այդ հայեցակարգը սահմանել է որպես «սրտից կատարված ծրագիր»: Նախագծերը կարող են լինել անհատական և խմբային, տեղական և հեռահաղորդակցական: Վերջինիս դեպքում սովորողների խումբը կարող է նախագծային աշխատանքն իրականացնել համացանցում՝ գտնվելով տարբեր տարածաշրջաններում: Ընդ որում՝ ցանկացած նախագիծ կարող է ունենալ իր աշխատանքային ընթացքն արտացոլող կայքը: Այսպիսի ուսումնական նախագծի նպատակն այն է, որ պետք է բազմակողմանիորեն լուսաբանվի նախագծի ընթացքում իրականացվող ուսումնասիրությունների և արդյունքի ստացման ողջ ընթացքը:

Ցանկացած նախագծի հիմնական նպատակն է տարբեր կարողությունների ձևավորումը, որոնք ժամանակակից մանկավարժության մեջ անվանում են անձնային համալիր առանձնահատկություններ: Այն է՝ գիտելիքների, հմտությունների, արժեքների փոխկապակցում, ինչպես նաև համապատասխան իրավիճակում նրանց մոբիլիզացում և կիրառելու պատրաստակամություն:

Նախագծային մեթոդը ստեղծում է նպաստավոր պայմաններ հետևյալ կարողությունների ու հմտությունների ձևավորման ու զարգացման համար.

1. Ռեֆլեկտիվ հմտություններ
2. Որոնողական, հետազոտական հմտություններ
3. Համագործակցային հմտություններ
4. Կառավարման կարողություններ, հմտություններ
5. Շնորհանդեսների պատրաստման հմտություններ
6. Ներկայացման հմտություններ

Նախագծերի տեսակները

- Գործնականակողմնորոշիչ նախագիծ (օրինակ՝ Ուսումնասօժանդակ կյուլթի ստեղծում)
- Անհատական նախագիծ (օրինակ՝ Սոցիալական հարցում միկրոհաշվիչի օգտագործման վերաբերյալ)
- Տեղեկատվական նախագիծ (օրինակ՝ Ստեղծել «Անվանի հայ մաթեմատիկոսներ» ինտերնետային էջ)
- Ստեղծագործական նախագիծ (օրինակ՝ Ոչ ավանդական մոտեցում նախագծային արդյունքի ստեղծման գործում)
- Դերային նախագիծ (օրինակ՝ Թատերական ներկայացում)

Նախագծային մեթոդի տարբերությունն այլ մեթոդներից

Այն է՝ աշակերտների հետաքրքրությունների շրջանակի բացահայտում, աշակերտների գիտելիքների և կարողությունների գործնական կիրառություն, նախաձեռնողականություն, դպրոցի տարածքից դուրս գիտելիքների և հմտությունների ձեռք բերում, աշակերտների գործունեության մաքսիմալ ինքնուրույնություն և ստեղծագործական մոտեցում, գործընթացի հանրային արդյունք և ներկայացում:

Նախագծային գործունեության փուլերը

- խնդրի ձևակերպում ,
- նպատակային դպրոցական գործունեություն,
- համագործակցության կազմակերպում,
- գործունեության արդյունք, որպես աշակերտների կողմից խնդրի լուծման բացահայտում,
- արդյունքի, սեփական ստեղծագործության ցուցադրություն,
- հաջողակ իրավիճակի վերապրում:

Մեր օրերում նախագծային մեթոդը լայն տարածում է ստանում կրթական հաստատություններում և օգտագործվում, կիրառվում շատ մասնագետների կողմից: Նախագծային մեթոդը թույլ է տալիս նաև հաշվի առնել աշակերտների ֆիզիկական և հոգեկան ֆիզիկական վիճակը: Մեթոդի ընթացքում ցանկալի է տարբեր մասնագետների ներառվածությունը, քանի որ որքան շատ մասնագետներ են ներգրավված լինում ծրագրում, այնքան հավանականությունը շատ է լինում աշակերտների <<խնդիրների>>, կարիքների բացահայտման:

Այն հնարավորություն է տալիս սովորողին բացահայտելու իր մեջ եղած ստեղծագործական ներուժը: Խմբային աշխատանքների՝ նախագծերի իրականացման պարագայում այն առաջարկում է մի շարք խնդիրների լուծումներ, ինչպես նաև զարգացնում է սովորողների մոտ ինչպես ինքնուրույն, այնպես էլ թիմային աշխատանք կազմակերպելու հմտություն: Ուսուցման նախագծային համակարգի հիմնական արժեքն այն է, որ այն աշակերտներին ուղղորդում է ոչ թե որոշակի թեմայի պարզ ուսումնասիրության, այլ կրթական արդյունք ստեղծելու գործընթացին: Նախագծային մեթոդի ուսուցումնան հիմք կարելի է ընդունել սովորողի ակտիվ գործունեությունը՝ հաշվի առնելով սովորողի անձնական հետաքրքրությունները կոնկրետ այդ թեմայի շուրջ: Այս մոտեցումը առավել նպատակային է տարրական դասարաններում աշակերտների մոտ՝ փնտրելու, պրպտելու ջիղը զարգացնելու նպատակն ունենալով: Էական նշանակություն ունի նաև այն, որ սովորողներին առաջարկվեն իրական կյանքից վերցված խնդիրներ, որոնք կարևոր են իրենց համար: Կրտսեր դպրոցականները սկսում են մտածել և տարրորոշել, առանձնացնել իրենց շրջապատում կարևոր և անկերևոր երևույթները՝ ձևավորելով հետաքրքրությունների հստակ շրջանակ:



Այս խնդիրների լուծման համար սովորողին անհրաժեշտ կլինի կիրառել ինչպես մինչ այդ ունեցած գիտելիքները, այնպես էլ նոր գիտելիքներ, որոնք նա ձեռք կբերի աշխատանքի ընթացքում:

Սովորողի դերը նախագծային աշխատանքում տարբերվում է, պասսիվ լսողից նա դառնում է ակտիվ մասնակից, հետազոտող, գործունեություն ծավալող: Նա ազատ է գործունեության ձևի ու տեսակի ընտրության մեջ: Տարրական դասարանում սովորողի համար այս մեթոդը թերևս նաև անհատական առանձնահատկություններ բացահայտելու լավագույն խթան է, սկիզբ:

Նախագծի առանձնահատկություններից մեկն էլ աշխատանքի նախնական պլանավորումն է: Ամբողջ ընթացքը՝ սկսած ծագած խնդրից մինչև նախագծի նպատակը, անհրաժեշտ է բաժանել առանձին փուլերի՝ յուրաքանչյուրի համար իրենց ժամանակավոր խնդիրներով, պարզել այդ խնդիրների լուծման միջոցները և դրա համար ռեսուրսներ գտնել, աշխատանքի համար մանրամասն աղյուսակ կազմել, որտեղ նշված լինի յուրաքանչյուր փուլի իրականացման ժամանակը: Նախագծային աշխատանքի պլանի իրականացումը, որպես կանոն, կապված է գրականության և տեղեկատվության այլ աղբյուրների ուսումնասիրության հետ, տեղեկատվության ընտրության հետ: Հնարավոր է նաև կապված է տարբեր փորձերի անցկացման, գիտափորձերի, դիտումների, հետազոտությունների, հարցումների, ստացված տվյալների վերլուծության, եզրակացությունների ձևավորման և դրա հիման վրա ձևավորված սեփական տեսակետի հետ: Նախագծի խնդրի լուծման և գտնված լուծման մարմնավորման համար ստեղծվում է նախագծային արտադրանք: Նախագծային արտադրանքը պետք է ունենա պարզորոշ սպառողական հատկություններ, որոնք էլ բավարարեն խնդրի հանդիպած ցանկացած մարդու պահանջները, որի լուծմանը հենց ուղղված էր տվյալ նախագիծը:

Նախագիծը պարտադիր պետք է ունենա գրված մաս՝ հաշվետվություն աշխատանքի ընթացքի մասին, որտեղ նկարագրված են աշխատանքի բոլոր փուլերը (սկսած նախագծի խնդրի առաջադրումից), նրանց վրա հիմնված բոլոր որոշումները, առաջացած բոլոր խնդիրները, դրանց հաղթահարման միջոցները, վերլուծվում է հավաքված տեղեկատվությունը, գիտափորձերի անցկացումը և դիտումը, ի մի են բերվում հարցումների արդյունքները, արվում են եզրակացություններ, պարզաբանվում են նախագծի հեռանկարները:

Այսպիսով ուսումնական նախագիծը ուսուցչի կողմից կազմակերպված և աշակերտների կողմից իրականացվող գործողությունների ամբողջությունն է:



Դասավանդողի դերը նախագծի իրականացման տարբեր փուլերում կարող է փոխվել: Բոլոր փուլերում էլ նա հանդես է գալիս որպես խորհրդատու, օգնական: Նա գիտելիքներ չի փոխանցում, այլ ապահովում է սովորողի ինքնագործունեությունը, այսինքն՝ խորհուրդներ է տալիս, հետևում է ընթացքին, ուղղորդում է: Ուսուցչի համար ուսումնական նախագիծը զարգացման ինտեգրված դիդակտիկ միջոց է, ուսուցում և դաստիարակում, որը թույլ է տալիս զարգացնել նախագծային հատուկ կարողություններ ու հմտություններ՝ խնդրի առաջադրում, նպատակամղվածություն, իրականացվելիք պլաններ, վերլուծություն, ինքնաներկայացում, ինչպես նաև տեղեկատվության որոնում, ակադեմիական գիտելիքների օգտագործում ըստ նշանակության, ինքնակրթություն, հետազոտական և ստեղծագործական գործունեություն:

Ուսուցչի դերը նախագծային մեթոդը կիրառելիս անգնահատելի է հատկապես տարրական դասարանում: Հաշվի առնելով տարիքային առանձնահատկությունները՝ կարծում ենք տարրական դասարանի աշակերտները դեռևս չեն տիրապետում անհրաժեշտ այն կարողություններին, որոնց միջոցով իրականացվում է լիարժեք ուսումնական նախագիծ: Տարրական դասարանների առնչությամբ անհրաժեշտ է շեշտը դնել նախագծային գործունեության տարրերի վրա:

Նախագիծը պարտադիր պետք է ունենա պարզ, իրականացվելիք, հասանելիք նպատակ: Տարրական դասարաններում այն պետք է ունենա տարիքային առանձնահատկությանը բնորոշ հետաքրքրության որոշակի շրջանակ:

1-4-րդ դասարաններում կազմակերպվող նախագծային գործունեության առանձնահատկությունն այն է, որ դրանք անհատական, զույգերով, խմբային, կոլեկտիվ խմբային առաջադրանքներ են, որոնք դպրոցին հնարավորություն են տալիս դասի ընթացքում կատարվող ուսումնական գործունեությունից անհատապես անցում կատարել զարգացման արդիական փուլից դեպի զարգացման մերձավոր գոտի: Խմբերից յուրաքանչյուրը կարող է աշխատել նախագծային աշխատանքի որևէ մասի, որևէ հարցի, կամ խնդրի շուրջ:

Պրակտիկայում առավել հաճախ օգտագործվում են անհատական և խմբային գործունեության նախագծերի հետևյալ տեսակները.

1. Հետազոտական-ստեղծագործական
2. Դերային-խաղային
3. Տեղեկատվական-կողմնորոշիչ
4. Գործնական-ստեղծագործական-կողմնորոշիչ

Չետագոտության ընթացքը և տվյալների հավաքագրում «Մեր սեղանի սուրբ հացը»

«Մեր սեղանի սուրբ հացը» նախագիծ, որը բնույթով՝ տեղակատվական հետազոտական շխատանք է, բովանդակությամբ՝ աշակերտը և ստեղծարար աշխարհը, տեսակով՝ խմբային, ժամկետով՝ կարճաժամկետ: Խնդիր-պրոբլեմ՝ ինչպե՞ս է ստեղծվում հացը և ինչի համար է այն հարկավոր մարդուն: Նպատակը՝ մեծահասակի հետ միասին հավաքագրել տեղեկատվություն, թե ինչպես է հացը հասնում մեր սեղանին, կարողանալ հաջորդական վերլուծություն կատարել, հետազոտել, կատարել եզրահանգումներ, ապացուցել գաղափարները և արտացոլել վերջնարդյունքի տեսքով: Իսկ որպես տեղեկատվության ձեռք բերման միջոցներ հանդես են եկել, մեծահասակները՝ ուսուցիչ, ծնող, մասնագետ, տեսանյութեր, համակարգիչ, հեռուստացույց, նկարներ, գրքեր, դիտումներ, ուսումնասիրություններ, էքսկուրսիա:

Քանի որ նախագծային մեթոդը հենց կրթական մեթոդների ամբողջություն է, որոնք հնարավորություն են տալիս սովորողներին ձեռք բերել գիտելիքներ և կարողություններ՝ կոնկրետ հանձնարարություններ պլանավորելու և ինքնուրույն իրականացնելու համար: Արդյունքը ներկայանալի, տեսասնելի, հրապարակված է աշխատանքում, որը փուլ առ փուլ կներկայացնենք ստորև: Նշենք, որ հետազոտությունը անց է կացվել 34 աշակերտների հետ, էքսկուրսիայի ժամանակ՝ Մաչանեսց տանը:

1. Նախապատրաստական փուլ - տարբեր հարցերի միջոցով ուսուցիչը և աշակերտները պարզում են, թե իրենք ի՞նչ գիտեն և ի՞նչ չգիտեն թեմայի վերաբերյալ, օրինակ՝ ի՞նչն է բացակայում նախաճաշի սեղանից: Ի՞նչ է հացը: Որտեղի՞ց է առաջացել: Ի՞նչ կարող եք պատմել հացի մասին: Որտե՞ղ է թխվում հացը: Ովքե՞ր են թխում հացը: Ի՞նչ հացի տեսակներ կան և այլն: Որտեղից կարող ենք իմանալ ամեն ինչ հացի մասին, տեղեկատվության հավաքագրում, հարցնել վաճառողին, հարցնել ծնողներին, մեծահասակներին, իմանալ գրքերից, նկարներից, համակարգչից, հեռուստացույցից, ինքնուրույն փորձեր կատարել, փորձել հաց թխել:

2. Տեղեկատվության հավաքագրում - երեխաները ծնողների օգնությամբ պատրաստում էին թղթապանակներ հացի մասին, գտնում էին ասույթներ, ասացվածքներ, բանաստեղծություններ : Պատմություններն ու հեքիաթները պատկերում են նկարներով: Ուսուցիչը վարում էր զրույց հացի ստեղծման մասին:

Երեխաներին նախապես հանձնարարված Էր դիտել մուլտֆիլմեր

«Կախարդական լավաշ», «Պատմություն աղջկա մասին, որը տրորել էր հացը»:

Երեխաները կազմում էին հացի ստեղծման տեխնոլոգիայի ավգորիտմ: Ուսուցիչը վարում էր նախնական զրույց ` ինչպե՞ս են պատրաստում հացը, որտեղ են թխում լավաշը, ովքե՞ր են թխում, ի՞նչ մեքենաներ են աշխատում հացի ստեղծման համար, պատմությունների ստեղծում:

Այսպիսով աշխատանքի ընթացքում աշակերտները օգնում էին հացթուփին թխել հաց: Ինչպե՞ս կարող ենք օգնել հացթուփին, ի՞նչ մթերքներ են հարկավոր հաց թխելու համար: Նկարագրել թխման տեխնոլոգիան, անձնական փորձի միջոցով` պատրաստել հաց և նկարագրել ընթացքը:

Աշխատանքի արդյունքում հարցադրումներ կատարվեցին` ի՞նչ իմացանք հացի մասին, եկեք հիշենք ամեն ինչ սկզբից: Ինչի՞ց սկսեցինք հետազոտությունները: Որտեղի՞ց իմացանք նորություններ հացի մասին: Ի՞նչ իմացանք մեծահասակներից, <<գործարանից>> , խանութից, համակարգչից, գրքերից, նկարներից: Ո՞ր մեքենաներ են մեզ օգնում: Ի՞նչ սովորեցինք թխել: Ի՞նչ ստեղծագործությունների ծանոթացանք: Երեխաները ցուցադրում են իրենց ստեղծած գրքույկները, պատմում նկարների մասին: Երաժշտության, ուսուցչի հետ սովորում ենք երգեր հացի վերաբերյալ: Եթե չկան երգեր միասին ստեղծում էինք և սովորում:

«Մեր այգում ամառ է»

Նաև աշակերտների հետ միասին անցկացրել ենք խաղ «Մեր այգում ամառ է» թեմայով՝ 2-րդ դասարանում:

Հաշվի առնելով աշակերտների տարիքային առանձնահատկությունները և ցուցաբերելով անհատական մոտեցում, միաժամանակ ստեղծելով ուսուցիչ-աշակերտ համագործակցային մթնոլորտ՝ կատարել ենք դերային բաժանում և աշխատանքի բաշխում: Նախագծի նպատակն էր բացահայտել ամառը և նրա գեղեցկությունը: Զանի որ տարրական դասարաններում ուսումնական առարկաների թիվը սահմանափակ է և ըստ այդմ՝ ակադեմիական գիտելիքները՝ սահմանակապակ, մենք որոշեցինք որպես նպատակ ընտրել ամռան գեղագիտական կողմը: Մեր նախագծային մեթոդի խնդիրներն էին՝

- Բնագիտական և բնապահպանական գիտելիքների և հմտությունների զարգացում
- Գրագետ խոսքի կարողությունների զարգացում
- Տեղեկություններ հավաքելու և տարածելու հմտության զարգացում
- Գեղագիտական ճաշակի ձևավորում
- Ստեղծագործական մտքի զարգացում
- Աշխատանքների կազմակերպչական հմտությունների ձևավորում
- Նոր գիտելիքների ձեռքբերում

Որոշեցինք նախագիծը իրականացնել ամառանոցային միջավայրում, որտեղ կար այգի՝ մրգատու ծառերով: Այգում կային տարբեր մրգատու ծառեր՝խնձորենի, տանձենի, սալորենի, կեռասենի, ծիրանենի և այլն, կային նաև եղևնիներ: Աշակերտները բաժանվեցին երկու խմբի, և յուրաքանչյուր խումբ իր անդամներին հանձնարարում էր որոշակի աշխատանք:

Նախագծային աշխատանքը կատարելիս ակնառու էր այն փաստը, որ խմբերից յուրաքանչյուրը արագ կողմնորոշվեց խմբի ղեկավար ընտրելու հարցում, որն ուղղորդում էր աշխատանքը (բնականաբար ուսուցչի հսկողությամբ և անմիջական միջնորդությամբ): Առաջին խմբի խնդիրը ամառային գեղեցիկ և երփներանգ գույներն էին, իսկ երկրորդ խմբինը՝ այգում աճող անուշահամ մրգերը: Նպատակը մասնավորապես տերևները և մրգերը հնարավորինս «ներկայացնելն էր»: Հետաքրքիր էր կողքից նայել աշակերտների աշխատանքը, նրանց խմբային, կազմակերպված աշխատանքը, նախաձեռնողականությանը և այլնին: Այսպիսով բոլորն ունեին հստակ

հանձնարարություն, հստակ նպատակով: Խմբերը պայմանականորեն անվանեցինք՝ տերևների և մրգերի: Տերևների խումբը պետք է հավաքեր տարբեր ծառերի, տարբերի ձևի տերևներ, դրանց մասին ներկայացներ ռեֆերատներ, ստեղծագործական մոտեցում ցուցաբերելով՝ տերևներով ձևավորեր գեղեցիկ կոմպոզիցիա, իսկ մրգերի խումբը պետք է հավաքեր մրգերը, տեսակավորեր դրանք, դրանց մասին ներկայացներ ռեֆերատներ՝ օգտակարության մասին, ինչպես նաև ներկայացներ խոհարարական ձևավորմամբ՝ կազմակերպելով հյուրասիրություն:

Վերջում երկու խմբերը պետք է համագործակցեին՝ բեմադրելով փոքրիկ ներկայացում ամռան մասին, ինչպես նաև ընթերցեին ամռան մասին ստեղծագործություններ՝ թե՛ իրենց, թե՛ այլ գրողների հեղինակած: Այն հակասությունը, որ ամռանը ծառերի մի մասը պտղատու էր, իսկ մի մասը՝ ոչ երեխաների մոտ հետաքրքրության նոր ալիք բարձրացրեց և ըստ այդմ հետազոտական նոր աշխատանքների սկիզբ:

Պետք է նշել, որ այս մեթոդը հնարավորություն է տալիս դպրոցականին բացահայտել և հասկանալ այն, որն առավել հետաքրքրական է իր համար և զարգացնել այն: Այն համախմբում է աշակերտներին մեկ նպատակի շուրջ, ձևավորում աշխատասիրություն, և աշխատանքի արդյունքը ներկայացնելու կարողություն ու հմտություն:

Տվյալների վերլուծություն և մշակում

Այն հարցերին, թե իրենք ի՞նչ գիտեն և ի՞նչ չգիտեն հացի վերաբերյալ, օրինակ՝ ի՞նչն է բացակայում նախաճաշի սեղանից: Ի՞նչ է հացը: Որտեղի՞ց է առաջացել: Ի՞նչ կարող էք պատմել հացի մասին: Որտե՞ղ է թխվում հացը: Ովքե՞ր են թխում հացը: Ի՞նչ հացի տեսակներ կան և այլն: Երիտանդից ոմանք հարցին պատասխանել են հետևյալ կերպ, որ չի կարելի հացը տրորել, որովհետև այն սրբությունը է և ելնելով հարցի պատասխանից, կարող ենք ասել, որ այդ հարց-պատասխանից, երեխաների մոտ զարգանում է հարգանքն ինչ-որ մեկին, մի բանին: Իսկ մնացած հարցերին պատասխանում էին տարբեր կերպ, օգտվում էին իրենց պատրաստած կյուլերից, որոնց օգնությամբ էլ զարգանում էր աշակերտների պատմողական, վերլուծական միտքը, բարելավվում և ընդլայնվում են գիտելիքները:

Մյուս հետազոտության ընթացքում աշակերտները հավաքել էին տերևներ՝ խնձորենու, բալենու, ծիրանենու, դեղձենու և այլնի: Դրանց օգնությամբ նրանք

ստացել էին տարբեր պետկերներ, մի քանիսը տերևների օգնությամբ պատրաստել էր մեծ բազմահարկ տուն, մյուսը այգի՝ ծառներով: Իսկ մյուս խմբի աշակերտները հավաքել էին մրգերը, տեսակավորել գեղեցիկ զամբյուղներում, հավաքել տեղեկություններ իրենց հավաքած մրգերի և դրանց օգտակարության վերաբերյալ և մյուս խմբի հետ միասին կատարել էին բեմադրություն: Աշակերտները իրենց բաշխել էին դերեր(ուսուցիչներ, աշակերտներ) և բեմադրել էին հանդես, որի ընթացքում ցուցադրում էին իրենց տերևներով կատարած աշխատանքները և ցուցադրելով մրգերը խոսում դրանց մասին, թե որ միոգը իր մեջ ունի ավելի շատ օգտակարություն, որն է ավելի շատ հանդիպում Արարատյան դաշտում և այլն:

Աշակերտները լավագույն կերպով էին պատրաստվել ներկայացմանը՝ ցուցադրելով իրենց ստեղծագործական ողջ ներուժը ամռան գեղեցկությունները բացահայտելիս:

Երեխաներից յուրաքանչյուրը մեծ ոգևորությամբ ու պատասխանատվությամբ էր կատարում իրեն հասանելիք աշխատանքը: Նախագծային աշխատանքի կատարումը մեծ բավականություն պատճառեց մեր աշակերտներին:

Այսպիսով նախագծային գործունեության ընթացքում մենք հասանք մեր նպատակին, զրույցի հարցման, խաղի մեթոդի միջոցով զարգացրինք մեր գիտելիքները, կարողությունները, սովորեցինք, թե ինչպես կարելի է ինքնուրույն ձեռնարկել ինչ-որ մի բան, նպատակ դնել և հասնել այդ նպատակին:

Չետագոտության ընթացքում բացահայտվեցին աշակերտների հետաքրքրությունները, նրանք իմացան, թե ինչպես պետք է լինել նախաձեռնող, համագործակցող և աշխատասեր:

Այսպիսով ես, որպես հետազոտող, երեխաների հետ անցկացնելով հետազոտություն, գնացինք Մաչանենց տուն, ամառանոց, աշխատանքները կատարելու, և դրանով ես հասա իմ վերջնարդյունքին, երեխաները սկզբում ծնողների օգնությամբ, այնուհետև միայնակ հացթուփների հետ թխեցին հաց, լավաշ, ներկայացրին իրենց աշխատանքերը, երգեցին, ասմունքեցին և դրանով սովորեցին՝ ինչպես պետք է լինել կազմակերպված, ինքնուրույն և նախաձեռնող:

Եզրակացություններ

Կատարված ուսումնասիրություններն ու հետազոտությունները հիմք են հանդիսանում կատարել հետևյալ եզրակացությունները՝

- Դպրոցականների առանձնահատկություններից ելնելով տարրական դպրոցի ուսումնական գործընթացում կարևոր նշանակություն ունենին խաղերի կիրառումը, որոնք օգնում և ավելի էին պատկերավոր դարձնում ուսումնական նյութը, աշակերտներին դարձնում ավելի կազմակերպված, ինքնուրույն, ստեղծարար, ինչն էլ նպաստում էր ուսումնական գործընթացի արդյունավետության բարձրացմանը և կարողունակության զարգացմանը :
- Նախագծեր ստեղծելով մանկավարժը կարող է աշակերտների մոտ ձևավորել ներքին մոտիվացիայի և կառուցողական քննադատական մտածողության զարգացում:
- Առաջարկվող թեման պետք էր անպայման հետաքրքրեր սովորողին: Սովորողը պետք էր ոչ միայն թեմայի ընտրության հնարավորություն ունենար, այլև ինքն առաջարկեր իրեն հետաքրքրող թեման:
- Նախագծային աշխատանքը հետաքրքիր էր, օգտակար և հեռանկարային, եթե ճիշտ էր ընտրված թեման, ճիշտ էր հաշվարկված ժամանակը՝ նախագծի աշխատանքի, նախագծերի միջև դադարների:

Օգտագործված գրականության ցանկ

- Մատյաշ Ն.Վ., Սիմոնենկո Վ.Դ. Կրտսեր ուսանողների նախագծային գործունեությունը: Մ. 2002:
- Շչերբակովա Ս.Գ. Հանրակրթական հաստատությունում նախագծային գործունեության կազմակերպում: 2007 թ Kilpatrick William Heard (1918): Սերգեևա Վ.Պ. «Հոգեբանամանկավարժական տեսություններ և տեխնոլոգիաներ տարրական կրթություն»Մ.2002 թ
- Кильпатрик В. *Основы метода*. М.-Л., 1928
- *The Project Method*: Teachers College Record
- <https://dpir.mskh.am/hy/node/533>